# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ» ՓԲԸ կարիքների համար ՀՀՌՑ-ՀՄԱԽԾՁԲ-26/25 ծածկագրով Կենտրոնի (Ապարան, Աշտարակ, Գեղաձոր, Վեդի), Վայոց Ձորի (Ջովաշեն, Եղեգնաձոր-1, Վայք, Ջերմուկ, Թերփ), Գեղարքունիքի (Սևանի լեռնանցք, Ճամբարակ, Գավառ, Վարդենիս, Մարտունի, Հրազդան, Անտառամեջ, Սևան, Ծաղկաձոր), Կապան/Գորիս (Կապան-1, Կապան-2, Եղվարդ, Ծավ, Շիկահող, Քաջարան, Վարդանիձոր, Մեղրի, Ագարակ, Անտառաշատ, Տանձավեր, Գորիս, Խնածախ, Կատարի) և Սիսիանի (Սիսիան, Դարբաս, Գորայք) տարածքային բաժինների հեռուստակայանների ենթակառուցվածքների վերակառուցման և վերազինման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման հայտերի բացման,գնահատման և ամփոփման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 30.06.2026թ. ժամը 11.00-ին

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահող՝** Ռոբերտ Աֆանդյանը
**Անդամներ՝** Գարիկ Հայրապետյանը
Վահագ Հակոբյանը
Իրենա Պողոսյանը

**Հանձնաժողովի քարտուղար՝** Մարինա Նիկոլյանը
**Բացակայում է Գոռ Զաքարյանը**

<u>1. Հանձնաժողովը արձանագրեց.</u>

**Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀՌՑ» ՓԲ ընկերության կարիքների Կենտրոնի (Ապարան, Աշտարակ, Գեղաձոր, Վեդի), Վայոց Ձորի (Ջովաշեն, Եղեգնաձոր-1, Վայք, Ջերմուկ, Թերփ), Գեղարքունիքի (Սևանի լեռնանցք, Ճամբարակ, Գավառ, Վարդենիս, Մարտունի, Հրազդան, Անտառամեջ, Սևան, Ծաղկաձոր), Կապան/Գորիս (Կապան-1, Կապան-2, Եղվարդ, Ծավ, Շիկահող, Քաջարան, Վարդանիձոր, Մեղրի, Ագարակ, Անտառաշատ, Տանձավեր, Գորիս, Խնածախ, Կատարի) և Սիսիանի (Սիսիան, Դարբաս, Գորայք) տարածքային բաժինների հեռուստակայանների ենթակառուցվածքների վերակառուցման և վերազինման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայությունների /Ծառայություն/ ձեռքբերման նպատակով 23.06.2026թ. էլեկտրոնային ARMEPS համակարգով /Համակարգ/ հայտարարվել է ՀՀՌՑ-ՀՄԱԽԾՁԲ-26/25 ծածկագրով **հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից** գնման ընթացակարգ /**Ընթացակարգ**/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով, 26.06.2026թ. ժամը 12:00-ին:

2. <u>Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները</u>

| N | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցեն, էլ. փոստի հասցեն | Հեռախոսահամար | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Գարեգին Նժդեհ 23/6<br>info@constructionproject.am | (+374) 11 778 787<br>(005), 44 77 87 87 | 04225682 |

3<u>. Մասնակիցների առաջարկած գները</u>

ՀՀ դրամ

| Հ/հ | Աշխատանքի անվանումը | Գնման գինը | մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | անվանումները | Գնային առաջարկ | | |
| | | | | արժեք | ԱԱՀ | ընդհանուր գինը |
| 1 | Կենտրոն և Վայոց Ձորի տարածքային բաժիններ | 3 750 000 | ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ | 3100000 | 620000 | 3 720 000 |
| 2 | Գեղարքունիքի տարածքային բաժին | 5 180 000 | | 4250000 | 850000 | 5 100 000 |
| 3 | Կապան/Գորիս տարածքային բաժին | 4 050 000 | | 3300000 | 660000 | 3 960 000 |
| 4 | Կապան/Գորիս և Սիսիան տարածքային բաժիններ | 2 415 000 | | 1970000 | 394000 | 2 364 000 |

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» /Կարգ/ 32-րդ կետի 21-րդ ենթակետի՝ Ընթացակարգի շրջանակում մասնակցի կողմից ներկայացված հայտը ուսումնասիրվել է գնահատող հանձնաժողովի կողմից, որի արդյունքում արձանագրվել է, որ մասնակցի կողմից չեն ներկայացվել Հրավերով պահանջվող հետևյալ փաստաթղթերը.

1. Լիցենզիաները և արտոնագիրը

Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման (բացառությամբ կոնստրուկտորական մաս, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)

բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր

կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր

ԱՐՏՈՆԱԳԻՐ՝ ԱՌԱՋԻՆ ԴԱՍ ԵՆԹԱԴԱՍ «Ա1 կամ «Ա2» (Արդյունաբերական, Բնակելի, Հասարակական շենքերի և շինությունների նախագծում՝ ճարտարագետ կոնստրուկտոր)

լիցենզիայի լուսապատճենահանված տարբերակը պետք է հաստատված լինի էլեկտրոնային թվային ստորագրությամբ;

2. «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով

Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայության ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Նմանատիպ են համարվում պահանջվող լիցենզիաների և արտոնագրի շրջանակներում կատարված պայմանագրերը:
Նմանատիպ պայմանագիրը /պայմանագրերը/ ներկայացվում են ավարտական փաստաթղթերի հետ մեկտեղ /հանձնման-ընդունման ակտեր, հարկային հաշիվներ, կարող է ներկայացվել նաև պայմանագրի կողմի գրություն-հավաստումը՝ պայմանագրի պատշաճ կատարման մասին/:

3. «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով

ա) Իժեներատեխնիկական անձնակազմում պետք է ներգրավված լինի, առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով մեկ ճարտարագետ-շինարար, որը պետք է ունենա ԱՌԱՋԻՆ ԴԱՍ ԵՆԹԱԴԱՍ «Ա1 կամ Ա2» ԱՐՏՈՆԱԳԻՐ (Արդյունաբերական, Բնակելի, Հասարակական շենքերի և շինությունների նախագծում՝ ճարտարագետ-կոնստրուկտոր), մեկ ճարտարագետ էներգետիկ, մեկ կապի և հեռահաղորդակցության ճարտարագետ:

բ) մասնակիցը որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

| Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների | | | | |
|---|---|---|---|---|
| անունը, ազգանունը | որակավորումը | աշխատանքային փորձը | | գործատուի անվանումը |
| | | ժամանակահատվածը | գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը | |
| 1. | | | | |

Աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

5. Հանձնաժողովը որոշեց

5.1 Ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով՝ նիստը կասեցնել 1/մեկ/ աշխատանքային օրով՝ առաջարկելով ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊ ընկերությանը մինչև կասեցման ժամկետը ավարտը՝ 29.06.2026թ. ներառյալ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ներկայացնել արձանագրված անհամապատասխանությունները:

5.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել՝ մասնակիցների կողմից շտկված փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

6. Հանձնաժողովը արձանագրեց.

6.1 Մինչև կասեցման ժամկետի ավարտին՝ 29.06.2026թ. **ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊ ընկերության** կողմից ներկայացվել են շտկված փաստաթղթերը և համապատասխանում են Հրավերով սահմանված պահանջներին:

**7. Գնահատման աղյուսակ**

Չափաբաժին 1-4 նախագծերի պատրաստում և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայություններ

| | ՄԱՍՆԱԿՑԻ ԳՆԱՀԱՏՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ | Գնահատման առավելագույն միավորը | Մասնակցի գնահատման արդյունքները |
|---|---|---|---|
| | | | Շին Նախագիծ ՍՊԸ |
| ՏԱ | Նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները | 40 | 40 |
| | Պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմում ներգրավված մասնակցի կամ ստատած գրավոր համաձայնությունների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրեր, որակավորումը հավաստող փաստաթղթեր (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) | 30 | 30 |
| ԳՄ | ԳՄ= ՆԳ X 30/ԳԳ, որտեղ՝<br>ԳՄ-ն գնային առաջարկին տրվող միավորն է,<br>ՆԳ-ն նվազագույն գինն է<br>ԳԳ-ն գնահատվող մասնակցի առաջարկած գինն է | 30 | 30 |
| | | ՆԳ | 3 720 000<br>5 180 000<br>4 050 000<br>2 415 000 |
| | | ԳԳ | 3 720 000<br>5 180 000<br>4 050 000<br>2 415 000 |
| | Ընդամենը ( ԳՄ + ՏԱ ) | 100 | 100 |
| ՄԳ | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ՝ ՄԳ<br>ՄԳ = (ԳՄ X 0.7) + (ՏԱ X 0.3), որտեղ՝<br>ՄԳ-ն մասնակցին տրվող գնահատականն է,<br>ԳՄ-ն մասնակցի գնային առաջարկին տրված միավորն է,<br>ՏԱ-ն մասնակցի որակավորման հատկանիշներին և տեխնիկական առաջարկին տրված միավորն է. | 42 | 42 |

*ընտրված մասնակից է ճանաչվում այն մասնակիցը, որին տրված գնահատականը (ՄԳ) ամենաբարձրն է:*

8. Հանձնաժողովը որոշեց

8.1.Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Շին Նախագիծ ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի /**Օրենք**/ 34-րդ հոդվածը՝ 1-4 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել Շին Նախագիծ ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

8.2 Հիմք ընդունելով Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը՝ անգործության ժամկետ չսահմանել և Շին Նախագիծ ՍՊ ընկերության հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի նախագահող՝ ______________ Ռոբետ Աֆանդյան

Հանձնաժողովի անդամներ՝ ______________ Գարիկ Հայրապետյան

______________ Վահագ Հակոբյան

______________ Իռենա Պողոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ______________ Մարինա Նիկոլյան